ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրականության հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀՄՆ-ՄԱՇՁԲ-18/47»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 23-ին** կնքված N **«ՀՀՄՆ-ՄԱՇՁԲ-18/47»** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի նոյեմբերի 20-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Կատարողի կողմից առաջարկվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ «20.11.2018թ.» բառերը փոխարինվել են «15.12.2018 թ.» բառերով:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/47» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» 11 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Նահապետ» ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 23-ին կնքված հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/47» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.6 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«20.11.2018 թ.»** բառերը փոխարինել **«15.12.2018 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 02508054, h/h 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Նահապետ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Շինարարների փ. 2 շ, բն. 45, հեռ.39-77-35, ՀՎՀՀ01215013, h/h 2470139107390000 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ:
Ս. Մուրադյան	Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.